ԷԼԻՏԱՅԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ՊՈՂՈՅԱՆ Մ. Պ.

Որպես ոլորտային սոցիոլոգիական տեսություն[1]՝ էլիտայի սոցիոլոգիայի տեսական մասը չնայած իր բաղադրիչ տեսություններում և ուղղություններում առկա բազմապիսի տարաձայնությունների և մոտեցումների, պետք է հենվի իր կորիզը համարվող հիմնադրույթների վրա, որոնք ընդունելի են բոլոր տեսությունների կողմից: Այն դրույթները, որ ընդունում են էլիտայի սոցիոլոգիայի բոլոր տեսական ուղղությունները, անվանենք էլիտայի սոցիոլոգիայի հիմնադրույթներ:

Էլիտայի տեսությունների զարգացումը ցույց է տալիս, որ դրանցում առկա են շատ տարբերություններ և տարաձայնություններ: Սակայն մշակելու համար էլիտայի տեսությունների հիմնադրույթները, որոնց վրա կարող է հենվել էլիտայի սոցիոլոգիան, անհրաժեշտ է պատասխանել մի շարք հարցերի: Դրանց պատասխանները տարաձայնությունների և էլիտայի տեսությունների ճյուղավորման պատճառ են եղել:

Այդ տարաձայնություններն առկա են անգամ հենց «էլիտա» հասկացության սահմանման ժամանակ: Էլիտայի տեսություններում ելակետային է այն միտքը, որ հասարակությունը բաժանվում է երկու մասի՝ որոշակի չափանիշներով հասարակության համար առավել մեծ, կարևոր նշանակություն ունեցող փոքրամասնություն և պակաս կամ ընդհանրապես նշանակություն չունեցող մեծամասնություն: Առաջինները ներկայացնում են էլիտան, իսկ երկրորդը՝ զանգվածները: Այս հիմնադրույթի հետ կապված՝ առաջանում են մի շարք հարցեր, որոնք երբեմն հիմք են էլիտայի տեսությունների դասակարգման և նոր հիմնադրույթների հստակեցման համար: Առաջին հարցը վերաբերում է էլիտայի առանձնացման չափանիշին. ո՞ւմ ենք համարում էլիտա:

Այս հարցին էլիտայի տարբեր տեսություններում տրված պատասխանները կարելի է գտնել նրանց տված «էլիտա» հասկացության սահմանումներում: Ամփոփելով բոլոր սահմանումները՝ Ս.Կելլերն առանձնացնում է երկու հիմնական մոտեցում՝ բարոյական և գործառութային[2]: Աշինը նույն բաժանումը կատարում է՝ արժե-

---

[1] *Ըստ Ռ. Մերտոնի՝ միջին մակարդակի սոցիոլոգիական տեսություն;*

[2] *Թողնելով բառերի թարգմանության գործը լեզվաբաններին, նախապես մենք օգտագործել ենք ֆունկցիոնալ, դիսֆունկցիոնալ, կառուցվածքաֆունկցիոնալ միջազգայնորեն ընդունված եզրերը, քանի որ դրանց հայերեն թարգմանությունները դեռևս չկան: Այս հոդվածում մենք կիրառում ենք համապատասխանաբար գործառնական, հակագործառնական, կառուցվածքագործառութային բառերը՝ հետագայում ակնկալելով լեզվաբաններից ավելի ստույգ թարգմանություն: Մասնավորապես «ֆունկցիոնալ» այստեղ նշանակում է «գործառույթը արդյունավետ իրականացնող», իսկ «կառուցվածքաֆունկցիոնալ» նշանակում է մոտեցում՝*

քային և կառուցվածքագործառութային [3]: Սարտորին նույն բաժանումը կատարում է ալտիմետրիկ (ըստ Աշինի՝ կառուցվածքագործառութային) և արժանիքի հիման վրա (merit criterion[4]):

Էլիտայի սահմանման արժեքային մոտեցման համաձայն՝ էլիտան հասարակության «ամենաարժանի[5]«, բարոյական ընդունակությունների կամ որևէ այլ արժեքային չափանիշի տեսանկյունից մյուսներին գերազանցող մարդիկ են: Ըստ շատ հեղինակների՝ հենց ընդունակությունների և բարոյական գերազանցության շնորհիվ է, որ նրանք հասնում են իշխանության: Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ միշտ չէ, որ լավագույնները և արժանվույններն են հասնում առավել մեծ իշխանության: Դեռ ավելին, այս առումով Ֆ. Հայեկը իր «Ճանապարհ դեպի ստրկություն» գրքում գրում է, որ «իշխանության են հասնում վատագույնները», և որ յուրաքանչյուր իշխանություն այլասերում է, իսկ բացարձակ իշխանությունը՝ բացարձակ է այլասերում:

Վերլուծելով էլիտայի սահմանման արժեքային և մերիտոկրատական մոտեցումը՝ Աշինը այն համարում է զուտ նորմատիվ և սոցիոլոգիական տվյալներով չորոշվող. նա եզրակացնում է, որ այս մոտեցումը քաղաքական փիլիսոփայության ոլորտ է և ոչ քաղաքական սոցիոլոգիայի: Մերիտոկրատական մոտեցումը գործնականում կիրառելի է նաև մշակութաբանական վերլուծության ժամանակ, երբ խոսքը մշակույթի և գիտության գործիչների մասին է: Նման դեպքում, երբ ուսումնասիրության նպատակը մշակույթի կամ գիտության ներկայացուցիչներին պարզելն է, թերևս որոշակի չափանիշներ հիմք ընդունելով, կարելի է դուրս գալ էմպիրիկ մակարդակ: Այսինքն՝ այստեղ էլիտան կարող է լինել սոցիոլոգիայի ուսումնասիրման առարկա: Սակայն այս դեպքում ևս պետք է ձերբազատվել բարոյական չափանիշներով էլիտան սահմանելուց, քանի որ այն չափելի չէ և դարձյալ մնում է սոցիալական փիլիսոփայության ոլորտում: Այլ հարց է, երբ դիտարկվում է բարոյական չափանիշներով էլիտայի սուբյեկտիվ ընկալումը սոցիումի կողմից, ոչ թե խնդիր է դրված այդ չափանիշներով խմբի օբյեկտիվ բացահայտումը հասարակությունում:

Վերադառնալով մեր ուսումնասիրության առարկա՝ «քաղաքական էլիտայի» սահմանման կառուցվածքա-գործառութային տարբերակին՝ ասենք, որ այն կիրառում են առավել շատ քաղաքագետներ և սոցիոլոգներ: Այսպես, թե՛ Աշինը, թե՛ Սարտորին, թե՛ Կելլերը, դասակարգելով էլիտայի սահմանումները, անպայման նշում են կառուցվածքագործառութային մոտեցումը: Գ. Մոսկան նույնպես

ըստ կառուցվածքի և գործառույթի: Իսկ «ֆունկցիոնալիզմ» եզրի թարգմանություն ընդհանրապես չկա, դրա համար օգտագործվում է միջազգային եզրը՝ «ֆաշիզմ», «կոմունիզմ» համանմանությամբ:

[3] **Ашин Г. К., Лозинский Э. Д., Кравченко С. А.** *Социология политики, М., 2001.*

[4] **Сартори Дж.** *Вертикальная демократия (Полис, 1993, N 2, с. 81).*

[5] *Там же.*

հարում է այս տեսանկյանը՝ թեև խուսափում է էլիտա եզրից: «Բոլոր հասարակություններում... կան երկու դասի մարդիկ. առաջինը՝ իշխող դաս, երկրորդը՝ իշխվողների դաս»: Գ. Մոսկան իշխող կամ իր տերմինաբանությամբ՝ քաղաքական դասի գործառույթը համարում է հասարակության կառավարումը կամ օգնելը մեկ կամ մի քանի գերազդեցիկ մարդկանց՝ կառավարելու հասարակությանը: Մարդը, որ կանգնած է իշխանության գլուխ, չի կարող առանց իշխող դասի օգնության իրականացնել իր իշխանությունը զանգվածների վրա[6]:

Էլիտայի նման ըմբռնման քննադատները, որպես մեծագույն թերություն, նշում են այն փաստը, որ այս սահմանման դեպքում կորցնում ենք էլիտա բառի սկզբնական իմաստը էլիտա հասկացությունում: Իրոք՝ էլիտա տերմինը ծագել է լատիներեն eligere – ընտրել բառից, որն ամրապնդվել է այլ լեզուներում (ֆրանսերեն, իտալերեն[7]): Ֆրանսերեն elite- նշանակում է լավագույն, ընտրյալ[8]:

Հայերենում էլիտա տերմինի ամենատարածված թարգմանություններն են՝ վերնախավ, ընտրախավ, ընտրանի, որոնցից սակայն, յուրաքանչյուրն ունի իմաստային նրբերանգներ, որ թույլ չի տալիս լիարժեք արտահայտել էլիտա հասկացության ճիշտ բովանդակությունը և ծավալը: Մասնավորապես վերնախավ հասկացությունը վերաբերում է հասարակության վերին շերտում գտնվող մարդկանց, որոնք ոչ միշտ են ընտրյալ, ինչպես ենթադրվում է էլիտա հասկացությունում, և ոչ միշտ են լավագույն հատկանիշների տիրապետում: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ վերնախավ հասկացությունը կիրառելի է էլիտայի բարձրաչափական[9] ըմբռնման համար միայն, որը ենթադրում է հասարակության վերին շերտ՝ ըստ որոշ չափանիշների, որոնցից առավել տարածվածներն են՝ իշխանություն, հարստություն և հեղինակություն:

Ընտրախավ հասկացությունը ենթադրում է մարդու ինչ-որ չափանիշով ընտրյալ և բացառիկ լինելը՝ ընդունակություններ, տաղանդներ, բարոյական կամ այլ արժանիքներ: Հետևաբար, այն ավելի ճիշտ է կիրառել էլիտա հասկացության մերիտոկրատական մոտեցման ժամանակ, երբ խոսքը հասարակության բարձր արժանիքներ ունեցող խավի մասին է:

Պրակտիկայում հասարակության վերնախավը՝ ամենաիշխանավոր, ամենահարուստ կամ ամենահեղինակավոր շերտը, ինչպես հիմնավորվում է սույն հոդվածում, ոչ միշտ է տիրապետում նման հատկանիշների: Հետևաբար վերնախավը բոլորովին էլ պարտադիր չէ, որ համընկնի ընտրախավի հետ: Եվ վերջապես, ոչ ամենաիշխա-

---

[6] **Моска Г.** *Правящий класс (Социологические исследования, 1994, N 10, с. 187, 188).*

[7] **Сартори Дж.,** *նշվ. աշխ., էջ 82:*

[8] **Ашин Г. К., Лозинский Э. Д., Кравченко С. А.**, *նշվ. աշխ., էջ 235:*

[9] *Altimetric, ալտիմետրիկ՝ օգտագործում է մասնավորապես Սարտորին՝ «ըստ սոցիալական շերտավորման համակարգում զբաղեցրած դիրքի բարձրության» իմաստով:*

նավորները, ամենահարուստները և ամենահեղինակավորները մի կողմից և ոչ էլ ամենամեծ արժանիքներն ունեցողները մյուս կողմից, պարտադիր չէ, որ հասարակությունում դրսևորվեն որպես խավ կամ շերտ: Դրանք կարող են լինել տարբեր խավերի պատկանող, բայց որպես ընդհանրություն նույն կարգի արժանիքներ ունեցող մարդկանց սոցիալական խմբեր: Այսպիսով, որպեսզի ի նկատի ունենանք էլիտա առանց շեշտելու դրա խավ կամ խումբ լինելը, առաջարկում ենք օգտագործել ընտրանի հասկացությունը: Վերջինս սակայն կիրառելի է միայն մերիտոկրատական ըմբռնմամբ, քանի որ ունի ընտրյալ, բացառիկ արժանիքներ ունենալու իմաստ:

Ի մի բերելով էլիտա հասկացության հայերեն թարգմանության փորձերը, պետք է ասել, որ դրանք էլիտայի սոցիոլոգիայի համար օգտակար նոր հասկացություններ են: Սակայն դրանցից ոչ մեկը լիարժեք չի արտահայտում էլիտա հասկացության բովանդակությունը, փոխում է դրա ծավալը և շեղում հասկացության օբյեկտից: Հետևաբար դրանք չեն կարող լիարժեք փոխարինել էլիտա հասկացությանը, որը մենք կշարունակենք կիրառել առանց թարգմանության, երբ նկատի ունենք դրա լայն ըմբռնումը:

Էլիտա հասկացությունը, իր սկզբնական իմաստում ունի արժեքային, գնահատողական իմաստ, որը կորչում է կառուցվածքագործառութային սահմանման ժամանակ: Այստեղ հարց է առաջանում. ինչո՞ւ օգտագործել մի եզր, որն իր իմաստով չի համապատասխանում այդ եզրի հեղինակի ներդրած սկզբնական իմաստին: Սրա պատասխանը բազմիցս տվել են Աշինը, Սարտորին և այլ էլիտաբաններ: Սակայն, մեր կարծիքով, այդ հարցի պատասխանն առավել ակնհայտ է, եթե անդրադառնանք Պարետոյի սահմանմանը և փորձենք մեկնաբանել այն իր հայեցակարգի համատեքստում:

Պարետոյի հայեցակարգի համաձայն՝ էլիտան մարդիկ են, որոնք ունենալով որոշակի հատկանիշներ (կարևոր չէ՝ լավ կամ վատ) հասնում են իրենց գործունեության ոլորտում բարձրագույն արդյունքի, «ունեն գործունեության բարձրագույն ինդեքս[10]»:

Այսպես, վերլուծելով մարդկանց գործունեության շարժառիթները, նա առանձնացնում է ագրեգատների կայունության և կոմբինացիաների բնագդները, որոնք հատուկ են պարբերաբար իրար փոխարինող էլիտաներին: Իսկ այդ բնագդների առկայությունը նա բնորոշում է ագրեսիվությամբ, հավակնոտությամբ, բռնության հանդեպ հակվա-ծությամբ, մարդկանց համոզելու և հիմարացնելու հակվածությամբ և այլն: Ակնհայտ է, այս հատկանիշները արժեքային իմաստով լավագույններին հատուկ հատկանիշներ չեն: Այստեղից հետևություն, որ տարբեր հասարակություններում էլիտայի հատկանիշները տարբեր են և ոչ միանշանակ լավ: Սա թույլ է տալիս պնդելու, որ Պարետոն էլիտայի համալրման չափանիշները բխեցրել է նրանց բացառիկ ընդունակությունների տիրապետելուց,

[10] **Ашин Г. К.** *Современные теории элиты, М., 1974, с. 42.*

որոնք, սակայն, միշտ չէ, որ լավ հատկանիշներ են: Էլիտայի ձևավորման և համալրման ուսումնասիրության առումով, որպես մոդել, օգտակար ենք համարում այդ հատկանիշների ուսումնասիրությունը: Սակայն էլիտայի ըմբռնման կառուցվածքագործառութային սահմանման մեջ ելակետային չէ, թե ինչի հիման վրա են այդ մարդիկ հայտնվել էլիտայի շարքերում, այլ այն, թե որքանով են այդ մարդիկ կատարում իրենց գործառույթը: Հետևաբար այդ հատկանիշները մեզ պետք է հետաքրքրեն այնքանով, որքանով կարող են ազդել այդ գործառույթի կատարման վրա:

Էլիտայի սոցիոլոգիայի հիմնադրույթների կառուցման համար հաջորդ կարևոր հարցն այն է, թե ինչու է էլիտայի առկայությունն անխուսափելի: Այս հարցի տարբեր պատասխանները կարելի է դիտարկել էլիտայի տեսությունների չորս ուղղությունում՝ կենսաբանական, հոգեբանական, բյուրոկրատական և տեխնոկրատական:

Կենսաբանական ուղղության ներկայացուցիչ ամերիկացի սոցիոլոգ Ս. Դարլինգտոնի համոզմամբ՝ զանգվածների և էլիտայի միջև տարբերությունը կրում է ծագումնաբանական բնույթ և վերջին հաշվով որոշվում է «ժառանգականության ամուր նյութով», ընդ որում, պատմությունը կերտվում է լավագույն ժառանգությամբ մարդկանց «միացյալ գենոֆոնդով», այսինքն՝ էլիտայով[11]: Ռուս սոցիոլոգ Վ. Կայտուկովը նշում է, որ իշխող փոքրամասնության առանձնացումը «կյանքի գլոբալ օրենքն է, որն իրականանում է բնության մեջ բնական ընտրության միջոցով, իսկ մարդկային սոցիումի աշխարհում կենսագործվում է սոցիալ-սեքսուալ խթանների միջոցով, ուժեղների խրախուսման միջոցով... լավագույն կանանց սիրով և ոչ միայն որակապես, այլ նաև քանակապես: Անհավասարությունը մարդու կենսաբանական հիմքի մեջ է[12]«: Այսպիսով, անհավասարությունը համարելով ժառանգական, իսկ ժառանգականությունը մարդկանց մեջ բաժանելով լավի և վատի՝ այս ուղղությունը էլիտայի առաջանալը համարում է անխուսափելի և ծագումնաբանորեն պայմանավորված:

Էլիտայի առաջացման անխուսափելիության բացատրության ամենատարածված ձևն են հոգեբանական հիմնավորումները: Դրանք կարելի է պայմանականորեն բաժանել 3 խմբի՝ բնազդաբանական, ֆրեյդիստական և վարքագծային (բիհեյվորիստական):

Բնազդաբանների (Ու. Մակդաուգալ, Կ. Լորենց) դիրքորոշման համաձայն՝ հասարակության բաժանումը էլիտայի և զանգվածի, հետևանք է անձի բնածին գծերի և ծագումնաբանորեն ծրագրավորված է: Մարդկանց մեծամասնությանը բնորոշ են «հոտայնության», հարմարվողականության, ենթարկվելիության սկզբունքները, իսկ փոքրամասնությանը՝ իշխանության կարիքը:

Էլիտիզմի հոգեբանական սահմանումների մեջ այդ խնդրի արծարծման ամենամեծ տարածումը գտել է ֆրեյդիզմում: Զ. Ֆրոյ-

---

[11] **Bachrach P.** *Elites in a Democracy, 1991.*

[12] **Кайтуков В. М.** *Эволюция диктата. Опыт психофизиологии истории, М., 1991, с. 6.*

դը նշում է, որ հասարակության բաժանումը էլիտայի և զանգվածի ծնվել է հեղինակության ազգակցական ձևերից: Նա հատկապես նշում էր դեռ մանկուց առաջ եկած՝ հորից պաշտպանություն գտնելու կարիքը, որը բխում էր մարդու մանկական անպաշտպանվածությունից: Լուծելով «էդիպյան բարդույթը», դառնալով անկախ՝ մարդը զգում է «հոր նկատմամբ կարոտը», ինչում էլ արտահայտվում է հեղինակության կարիքը, որն ապրում է զանգվածային մարդու մեջ: Էլիտան էլ փորձում է օգտագործել զանգվածի այդ կարիքը, որպեսզի տանի իր հետևից: Ավտորիտար առաջնորդը և էլիտան Ֆրոյդը մեկնաբանում է որպես « հոր տեղակալներ»:

Բյուրոկրատական և տեխնոլոգիական տեսությունների հիմքում ընկած է այն գաղափարը, որ հասարակության զարգացման հետ առաջացած աշխատանքի բաժանման մեծ անհրաժեշտությունը առաջանում է նաև կառավարման ոլորտում, որտեղ շատ բարձր է գնահատվում մասնագիտական գործունեությունը: Շնորհիվ դրա՝ մասնագետները (բյուրոկրատականի դեպքում՝ արհեստավարժ կառավարողները, տեխնոլոգիականի դեպքում՝ իրենց գործին տիրապետող տարբեր ոլորտների նեղ մասնագետները, որոնց դերը տեխնոլոգիաների զարգացման տվյալ փուլում մեծ է) դառնում են հասարակության կարևորագույն գործառույթներն իրականացնողներ և հասարակության էլիտա:

Էլիտայի տեսություններում շոշափվում է նաև այն հարցը, թե ինչով է պայմանավորված այն փաստը, որ էլիտան փոքրամասնություն է և ոչ մեծամասնություն: Այս հարցի պատասխանն ունի երկու ուղղվածություն: Առաջին բացատրության մասին խոսում է Ռ. Միխելսը՝ ասելով, որ ժողովրդավարությունը կազմակերպելու համար մարդիկ ստիպված են լիազորել ավելի փոքր քանակով մարդկանց, որոնք տեխնիկապես հնարավորություն կունենան իրականացնելու կառավարումը[13]:

Երկրորդ մոտեցումը էլիտայի փոքրամասնություն լինելու հանգամանքը կապում է այն պնդման հետ, որ կառավարման համար անհրաժեշտ ընդունակությունները հասու են քիչ մարդկանց՝ միայն լավագույններին: Այս բացատրությունը հատուկ է արժեքային մոտեցմանը: Սակայն նկատենք, որ երկու բացատրությունները միմյանց չեն բացառում և կարող են փոխլրացնել:

Էլիտայի տեսություններում տարածված է այն դրույթը, որ էլիտային հատուկ է անընդհատ թարմացման գործընթացը, որը կարող է իրականացվել երկու ձևով՝ աստիճանական, անընդհատ համալրմամբ, որ ստացել է ֆիլտրացիա, զտում անվանումը, և ամբողջական շրջապտույտի միջոցով: Զտման ժամանակ որոշակի հատկանիշներով մարդիկ հասարակության ստորին շերտերից բարձրանում են դեպի էլիտա, և դրա փոխարեն էլիտայից տեղաշարժվում են ներքև նրանք, ովքեր սպառել են իրենց համապատասխան հատկանիշները: Դրա հետևանքով էլիտան անընդհատ թարմացվում է նոր ու-

[13] **Ашин Г. К.** *նշվ. աշխ., էջ 47:*

ժերով: Որքան հեշտ են կատարվում այդ համալրումը և նորացումը, այնքան ավելի ամուր են էլիտայի դիրքերը: Սակայն երբ էլիտան փակ է կամ զտումը լավ չի ընթանում, մեծ է վտանգը, որ այն ամբողջությամբ կփոխարինվի նոր էլիտայով: Այս դեպքում արդեն տեղի է ունենում խմբային համալրում կամ շրջապտույտ, որն արդյունք է ոչ թե անհատական, այլ խմբային սոցիալական շարժունակության:

Հարց է առաջանում՝ որո՞նք են այն հատկանիշները, որ «թույլ են տալիս մտնել էլիտայի շարքեր»: Ինչո՞վ է պայմանավորված մարդկանց առաջընթացն իշխանության սանդղակով: Արժեքային մոտեցման ներկայացուցիչներն այս հատկանիշներին վերագրում են բացառապես դրական իմաստ: Որպես նման հատկանիշներ՝ նշվում են խելքը, տաղանդը, տարբեր ունակություններ և հմտություններ, բարոյականությունը և այլն: Կառուցվածքագործառութային մոտեցման համաձայն՝ այդ հատկանիշները միանշանակ չեն և կախված են ժամանակաշրջանից, հասարակությունում առկա սոցիոմշակութային համակարգերից, տեխնոլոգիաներից և այլն:

Աշինը, քննարկելով այն տեսակետը, որ մարդիկ բնական պայքարի հետևանքով, իրենց ընդունակությունների և հատկանիշների շնորհիվ հասնում են դիրքի, փողի, իշխանության, նշում է, որ դա նախ արդար պայքար չէ: Իսկ ինչ վերաբերում է, թե ինչ հատկանիշների շնորհիվ են հասնում այդ արժեքներին, ապա դրանք հեռու են դրական լինելուց: «Մի եղեք միամիտ, այդ հատկանիշները բարոյական գերազանցությունը, աշխատասիրությունը և նվիրվածությունը չեն, դրանք ներառում են անսկզբունքայնություն և անընդունակություն միջոցների ընտրության ժամանակ, գայլային պայքար, անխնայություն… Եվ այս բոլորը՝ հանուն հարստության»: Այնուհետև ավելացնում է. «Յ. Պանետին, հենվելով այնպիսի հեղինակների վրա, ինչպիսիք են Մոսկան, Պարետոն, Օրտեգան, Շպենգլերը, Լեոնեն, հայտարարում է, որ ընդունակությունները, որ տանում են հաջողության, այսինքն՝ այն, ինչ ունի էլիտան, բարոյապես չեզոք են կամ բացասական»[14]:

Այսպիսով, ամփոփելով էլիտայի տեսությունների մեր վերլուծությունը՝ առանձնացնենք հետևյալ հիմնադրույթները, որոնցով կարելի է առաջնորդվել քաղաքական էլիտայի սոցիոլոգիական հետազոտության տեսական մոդելի կառուցման ժամանակ.

1) էլիտայի սոցիոլոգիական վերլուծությունը կարող է լինել արժեքային և կառուցվածքագործառութային, եթե չի սահմանափակվում հետազոտության նպատակով.

2) էլիտան, որպես որոշ չափանիշներով առավել բարձր սոցիալական դիրք ունեցող և տվյալ հասարակությունում փոքրամասնություն կազմող սոցիալական խումբ, անխուսափելի է յուրաքանչյուր հասարակությունում.

3) էլիտային հատուկ են անընդհատ թարմացման, համալրման և զտման գործընթացները, որի ժամանակ որոշակի հատկանիշներով և

---

[14] **Ашин Г. К.** *Миф об элите и массовом обществе, М., 1968, с. 35.*

կարողություններով մարդիկ հասարակության ստորին շերտերից բարձրանում են դեպի էլիտա, իսկ էլիտայից իջնում են այն մարդիկ, որոնք սպառել են իրենց համապատասխան հատկանիշները.

4) այն հատկանիշները, որոնք նպաստում են էլիտայի շարքերում հաստատվելու, կախված են ժամանակաշրջանից, տեխնոլոգիաներից, սոցիալական և մշակութային համակարգից, և անպայման չէ, որ լինեն արժեքային տեսանկյունից դրական.

5) որքան ավելի դանդաղ է կատարվում էլիտայի թարմացումը, այնքան ավելի թույլ են նրա դիրքերը, և մեծ է վտանգը, որ այն ամբողջությամբ կփոխարինվի մեկ այլ էլիտայով.

6) սոցիալական խմբերը կամ հանրույթները ընտրում են առաջնորդներ, սպասելով նրանցից, որ մտնելով քաղաքական էլիտայի շարքեր՝ կներկայացնեն այդ խմբերի շահերը, այսպիսով ապահովելով ներկայացուցչական ժողովրդավարություն.

7) սակայն, ինչպես կազմակերպությունների մասին պնդում է Միխելսի «օլիգարխիայի երկաթյա օրենքը», այնպես էլ ողջ հասարակության մակարդակում ժողովրդավարությունը ձախողվում է, քանի որ էլիտան, հասնելով իշխանության, արդեն դառնում է նոր շահերի կրող և հետևում իր նոր դիրքին համապատասխան շահերի իրականացմանը:

Ելնելով վերոնշյալից կարելի է ձևակերպել երկու հարց, որոնց պետք է պատասխանի էլիտայի սոցիոլոգիան քաղաքական էլիտայի ուսումնասիրության ժամանակ՝

1) որո՞նք են այն հատկանիշները և գործոնները, որ հնարավորություն են տալիս մարդկանց ընդգրկվելու էլիտայում.

2) ովքե՞ր և ո՞ւմ շահերով են կառավարում հասարակությունը, և ի՞նչ պայմանների դեպքում է հնարավոր էլիտայի գործառնականություն և «օլիգարխիայի երկաթյա օրենքի» խափանում:

Այս հարցերը էլիտայի տեսություններում տարբեր ուղղությունների առաջացման հիմք են և կարևոր են էլիտայի հիմնահարցի ուսումնասիրության համար: Հետևաբար դրանք կարելի է համարել էլիտայի սոցիոլոգիայի հիմնական հարցեր:

Այժմ հիմնվելով էլիտայի սոցիոլոգիայի հիմնադրույթների վրա՝ անհրաժեշտ է կառուցել էլիտաների համակարգը և գործառնությունը նկարագրող այնպիսի տեսական մոդել, որը կարող է ՀՀ քաղաքական էլիտայի սոցիոլոգիական հետազոտության տեսական հիմք հանդիսանալ և որի միջոցով հնարավոր կլինի պատասխանել էլիտայի սոցիոլոգիայի հիմնահարցերին:

ОПРЕДЕЛЕНИЕ ПОСТУЛАТОВ И ПРОБЛЕМ СОЦИОЛОГИИ ЭЛИТЫ

ПОГОЯН М.П.

Резюме

Анализ социологических теорий элит позволяет определить основные вопросы и постулаты теории социологии элит как отраслевой социологической теории (теории среднего значения по Р. Мертону). Основные принципы теории социологии элит – это принципы, которые принимаются всеми теориями системы социологии элит, несмотря на многие разногласия и различия в разных направлениях и теориях. К основным принципам теории социологии элит следует отнести следующие:

1. Социологический анализ элит основан на меритократическом и функционалистическом подходах.
2. Элита как специальная социальная группа обязательна во всех обществах.
3. Процесс циркуляции элит обязателен.
4. Позитивность качеств, позволяющих стать членом элитных групп, не обязательна.
5. Мобильность циркуляции элит способствует силе и прочности элит.
6. В элитах действует золотой закон олигархии.

Ключевыми вопросами теории социологии элит, на наш взгляд, являются следующие: 1. каковы качества и факторы рекрутации элит; 2. кто и в чьих интересах правит обществом и как обойти золотой закон олигархии.

THE DEFINITION OF MAIN ISSUES AND POSTULATES IN SOCIOLOGY OF ELITES

M. POGHOYAN

Abstract

The analysis of sociological theories of elites allows to define the main principles and main issues in the theory of sociology of elites as a Field Sociological Theory. The main principles of the mentioned theory are those that despite many disagreements and differences are accepted by all the theories involved in the system of sociology of elites. As a result of analyses, the author defines the main principles in the theory of sociology of elites;
These principles allow to construct theoretical models susceptible of operation and use in the sociological research of elites.